# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 26.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20-21 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<08>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Պրոֆտեստ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 26.01.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20-21 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 26.01.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**ԳՆՈՐԴ**

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

ք. Երևան, Արմենակյան 108/4

ՀՎՀՀ 01508793

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150001612200100

Մ. Ադամյան

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Պրոֆտեստ>> ՍՊԸ

ք. Երևան, Կողբացի 28/72

ՀՎՀՀ 00120301

h/h 220290123490000

<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ

proftestllc@gmail.com

093-14-55-96

Ա. Մարտիրոսյան